«Անհրաժեշտ է հետազայում գյուղում ե՛լ ավելի ամրապնդել պրոլետարիատի դասակարգային դիրքերը, սահմանափակել կուլակային կապիտալիստական տարրերը, անդադար աշխատանքի տանել ընդլայնելու սոցիալիստական տարրերը գյուղատնտեսության մեջ, կուսակցության, խորհուրդների ու կոոպերացիայի շուրջը կազմակերպելով մեր հեճուղանը—չփափորությունը, միաժամանակ ամրապնդելով դաշինքը գյուղացիության միջին խավերի հետ»:


(ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՆՈՅԵՄԲ. ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ)

Հոկտեմբերը պրոլետարիատի հեղափոխությունն է: Պրոլետարիատից բացի չկա մի ուրիշ դասակարգ, վորն ընդունակ լիներ տապալելու կապիտալի տիրապետությունը: Ռուսաստանի գյուղացիությունը միացավ պրոլետարիատին և ապահովեց հեղափոխության հաղթությունը:

Գյուղացիական մասսայի ազատագրական ձգտումների հիմնական նըպատակը կալվածատիրական հողերի գրավումն էր: Բայց հողի ազգայնացումը կարող է աշխատավոր գյուղացիության շահագործման մի նոր աղբյուր դառնալ, յեթե իշխանությունը շարունակում է շահագործող դասակարգերի ձեռքում մնալ:

Պրոլետարական հեղափոխության ամենամեծ նվաճումը հենց այն է, վոր շահագործող դասակարգերը զրկվեցին և սեփականությունից և իշխանությունից, այն է, վոր իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցավ իսկ պրոլետարիատը վոչ վոքի շահագործել չի կարող: Ընդհակառակը, պրոլետարիատի շահը պահանջում է, վոր պահպանվեն թե հողի ազգայնացումը և թե նրա ոգտագործման աշխատավորական իրավունքը:

Բայց հողի նվաճումն ինքնըստինքյան գյուղացու դրություն մեջ անշահան փոփոխում կմտցնեն, յեթե արտադրության ձևերը նույնպես չհեղաշրջվեյն: Գյուղացու դարավոր դժբախտությունը, նրա ծանր վիճակի հիմնական աղբյուրը մանր գյուղատնտեսական արտադրությունն է: Պահպանելով արտադրության այդ յեղանակը, գյուղացին նորից կապիտալիզմի գաղափարն ու տիրապետության պայմաններ կստեղծի: Այստեղ ել նրան ոգնություն են գալիս պրոլետարիատի ստեղծած խորհրդային կարգերը: Գյուղացու փրկության միակ միջոցը սոցիալիզմն է, իսկ պրոլետարական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխություն է և նրա ստեղծած իշխանության միակ նպատակը սոցիալիզմի կառուցումն է: Պրոլետարական իշխանությունը ձեռք է առնում ամեն մի հնարավոր միջոց, վորպեսզի



ԸՆԿ. ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

կուլեկտիվ տնտեսությունների և կոոպերացիայի այլ ձևերի միջոցով գյուղացիությունն աստիճանաբար իր արտադրությունը սոցիալիստական հիմունքներով կազմակերպի:

Կուլեկտիվացման շարժումը մեր գյուղում արդեն մասսայական բնույթ է ստանում: Գործարանային արդյունաբերության հետևողական մեքենայացումը գյուղացու համար ստեղծում է այն բոլոր միջոցները, վորոնք անհրաժեշտ են թե կուլեկտիվ տնտեսության և սոցիալիստական արտադրության համար: Այդ միջոցները—կատարելագործված մեքենաներ, գործիքներ, պարարտանյութեր և այլն—գյուղացին կարող է ստանալ գործարանային արդյունաբերությունից միայն, վորը նույնպես ազգայնացրած է և պրոլետարիատի սեփականությունն է կազմում: Այս հանգամանքն ել ավելի յե ամրապնդում այն դաշինքը, վոր 11 տարի առաջ կնքվեց բանվորի և գյուղացու միջև: Խորհրդային իշխանության գյուղատնտեսական քաղա-



ԸՆԿ. Կորյունյան

Համամիութ. կենտրոնի նախագահ



ԸՆԿ. Ռիզով

Համամիութ. ժողովրդագրի նախագահ

Քականության ամբողջ խմատն այն է, վոր մասնավոր գյուղատնտեսու- թյունը կողքիկտիվ և սոցիալիստական ձևերով փոխարինի, այդ նպատա- կին հասնելու համար բարձրացնելով գյուղացու քաղաքական ու կուլտու- րական զարգացման մակարդակը, նրան մատակարարելով անհրաժեշտ գոր- ծիքներ ու մեքենաներ և նրան ոգնելով այն կավում, վոր մղվում է գյուղի կուլակների, վաշխառուների և այլ շահագործողների դեմ:


Հեղափոխության 12-րդ տարում գյուղացիության հիմնական անելիքն է լինելու կողքիկտիվ տնտեսությունների տարածումը: Այդ նպատակին հասնելու համար գյուղացիությունը պետք է ուժեղացնի իր կռիվը թե կուլակների և թե իր սեփական անզրագիտության ու սղիտության դեմ, պետք է ուժեղացնի իր խորհուրդները, ել ավելի ամրապնդի իր դաշինքը բանվորության հետ և ամեն կերպ աջակցի Խորհրդային իշխանությանը՝ բարձրացնելու մեր գոյության նյութական ու բարոյական մակարդակը, պահպանելու մեր շինարարության խաղաղ պայմանները, պաշտպանելու Խորհրդային Միությունը միջազգային բուրժուազիայի հարձակումից:

Հեղափոխության Հեղափոխության բոլոր հաղթությունների հիմնական պայմանը բանվորի ու գյուղացու դաշինքն է: Այդ դաշինքն որ-որի վրա ամրապնդելով, բանվորն ու գյուղացին կշախջախեն իրենց ներքին ու ար- տաքին բոլոր թշնամիներին, կհաղթահարեն իրենց սոցիալիստական շինա- նարարության ճանապարհին բուսնող բոլոր արգելքները և կպահանջեն Հեղափոխության վերջնական նպատակի հաղթությունը՝ սոցիալիզմի հաղթու- թյունը քաղաքում և գյուղում:



ԸՆԿ. Մ. Տխակալյա

Անդրկենտրոնի նախագահ



ԸՆԿ. Ա. Ղամալի-տղի

Անդրկենտրոնի նախագահ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերյան Հեղափոխությունը, վոր Հեղափոխության Հեղափոխության ճի անբաժան մասն է կազմում, Հայաստանի բանվորության և աշխատա- վոր գյուղացիության համար զարգացման մի նոր շրջան բացեց:

Նոյեմբերյան Հեղափոխության միջոցով Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն ազատվեցին բուրժուաների, կուլակների, տեր- տերների, խանութպանների և մաուզերիստների «պետականությունից», վորը հիմնված էր ամերիկյան կաթի ու անգլիական շինիների վրա: Մինչև Նոյեմբերյան Հեղափոխությունը, դաշնակների տիրապետությունը մեր յերկ- րում ստեղծել էր սով, համաճարակ, ազգամիջյան արյունալի կռիվներ: Մաուզերի ուժով հողը խլվում էր գյուղացիներից, ջնջվում էին բազմաթիվ թրքական գյուղեր, ամերիկյան ու անգլիական գեներալները մատի շարժու- մով Հայաստանի բանվորին ու աշխատավոր գյուղացուն քշում էին պա- տերազմի դաշտ, արյուն թափելու իր հայրենի և արտաքին կապիտալի շահերի համար:

Սակայն 1920 թվի նոյեմբերին Հայաստանի բանվոր ու աշխատավոր գյուղացիական մասսաների հեղափոխական հարվածների տակ ընկավ բուր- ժուաների և կուլակների տիրապետությունը:

Կուլակներն ու շարժիները և բոլոր տեսակի հակահեղափոխական տա- կանքները ուղեցին ոգտվել մեր սկզբնական զժվարություններից: Նրանք զաշնակցության դեկավարությունը կազմակերպեցին փետրվարյան ավան- տյուրան և փորձեցին վերականգնել իրենց նախկին խայտառակ տիրապե- տությունը:


Սակայն այդ հակահեղափոխական ուժերը հանդիպեցին Հայաստանի բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին ջախջախիչ հարվածներին և չարաչար պարտվելով ցիր ու ցան յեղան:

Նոյեմբերյան Հեղափոխության միջոցով մեր յերկրում խաղաղ ու շինարար աշխատանքի հնարավորութիւններ ստեղծվեցին: Սկսեց զարգանալ ու ծաղկել մեր արդյունաբերութիւնը, գյուղատնտեսութիւնը, մեր դաշտերը պատեցին ջրանցքները, մեր հողերը սկսեցին հերկել տրակտորները ու յերկրի բոլոր կողմերում տարածվեց հիգրոկայանների պայծառ լույսը:

Կոմունիստական Կուսակցութեան ղեկավարութեամբ, Անդրկովկասի և Ռուսաստանի պրոլետարիատի ոգնութեամբ Հայաստանի բանվորն ու աշխատավոր գյուղացիութիւնը այս ութ տարվա ընթացքում հսկայական աշխատանք են կատարել, զարգացրել են մեր յերկրի արտադրական ուժերը սոցիալիզմի կառուցման ուղիներով՝ կապված ամբողջ Խորհրդային Միութեան տնտեսութեան հետ:

Նոյեմբերյան Հեղափոխութիւնը կուլտուրական շինարարութեան հնարավորութիւններ ել ստեղծեց: Համալսարանը, բանֆակները, մեր ժողովրդական լուսավորութիւնը, թատրոնները, կինոները, բազմաթիվ գիտական հաստատութիւնները, միլիոնավոր գիր ու գրականութիւնը, ակումբները, իրձիթ-ընթերցարանները, անգրագիտութեան վերացման գործի կազմակերպումը, այս ամենը մեր յերկրի բանվորների ու աշխատավոր գյուղացիների փայլուն նվաճումներն են:

Մեր առաջիկա խնդիրներն են՝ յերկրի ինդուստրացումը, սոցիալիզմի առաջավոր դիրքերի՝ կուլիկտիվ տնտեսութիւնների ծավալումն ու ամրացումը, բանվորութեան և աշխատավոր գյուղացիութեան դաշինքի ամրացումը ինքնաքննադատութեան միջոցով բյուրոկրատիզմի դեմ անխնա պայքար մղելը, կուլտուրական հեղափոխութեան ծավալումն և խորացումը՝ ահա այն հիմնական խնդիրները և զենքերը, վոր ոգտագործելու յեն Հայաստանի բանվորն ու աշխատավոր գյուղացին, Կոմկուսի ղեկավարութեամբ մղվող նոր պայքարների և նորանոր նվաճումների ճանապարհին:



ԸՆԿ. Զ. Կոստանյան
ՀԽՍՀ Կոմիտեյի ավագ քարտուղար



ԸՆԿ. Ս. Կասյան
ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահ



ԸՆԿ. Ս. Տեր-Պարթեւյան
ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ բուրժուազիայի կուսակցութիւնը՝ Դաշնակցութիւնը իր պետական իշխանութեան ամբողջ շրջանում շարունակելով մնալ իմպերիալիզմի հլու կամակատարը, շարունակեց արյունալի կռիւները մի կողմից Տաճկաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ, մյուս կողմից Հայաստանի ներսում յեղած թուրք խաղաղ ազգաբնակչութեան հետ:

Անվերջ ու անընդհատ կռիւները, դաշնակցական մաուզերիստների սանձարձակ բռնութիւնները, իմպերիալիզմի սարքած դավադրութիւնները յերկիրը դարձրել էյին ավերակների կույտ. ամեն տեղ տիրապետում էյին սողն ու համաճարակը, հյուժվում, արնաքամ եր լինում Հայաստանի աշխատավորութիւնը:

Մյուս կողմից, այդ նույն աշխատավոր մասսաները լսում ու տեսնում էյին Ռուսաստանի պրոլետարիատի հաղթանակները և զգում էյին, վոր ստեղծված ծանր դրութիւնից դուրս գալու միակ ճանապարհն է դուրս գալ տիրող կարգերի դեմ, տապալել այն, իշխանութիւնն առնել իրեն ձեռքը:

Ահա այս պայմաններում սկսվեցին մայիսյան շարժումները Հայաստանում: Դա մի հոյակապ շարժում էր, վոր կատարեցին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական Կուսակցութեան ղեկավարութեամբ: Լենինականի բանվորութիւնն այդ ապստամբութեան մարտական ջրկատը դարձավ: Շուտով արյունոտ ու վճռական ցույցեր կազմակերպվե-

ցին Ն. Բայազետում, Ղարսում, Դիլիջանում և դասակարգային պայքարը զնալով ավելի սուր բնույթ եր ստանում:

Սակայն, կարճ ժամանակում հեղափոխական շարժումները ճնշվեցին: Մկսվեց կատաղի ունակցիան. դաշնակցական մտուզերիստներն սկսեցին բանտերը լցնել ու գնդակահարել շարժման ղեկավար կոմունիստ ընկերներին ու հեղափոխական բանվոր-գյուղացիներին:

Բայց հեղափոխության կրակը Դաշնակցությունը մարել չեր կարող:

Մայիսյան ապստամբությունը խրատական դաս յեղավ Հայաստանի աշխատավորության համար, վորը մի քանի ամիս հետո ալիլի կուռ կադմա-կերպությունը, ավելի հզոր ու վճռական հարված տվեց դաշնակցական տի-բապետությունն ու տապալեց այն:

Այսպիսով Մայիսյան ապստամբությունը Նոյեմբերյան Հեղափոխու-թյան նախադուրը դարձավ:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՃ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կոմունիստական կուսակցությունը, վոր մինչև 1918 թիվը կոչվում էր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական (բալլետիկների) կուսակցություն, հիմք է դրվել 1898 թ. Բելոռուսիայի այժմյան մայրաքա-ղաք Մինսկում, յերբ տեղի յե ունեցել կուսակցության 1-ին համագումար-ը: Բայց կուսակցության պատմությունն իսկապես շատ ավելի առաջ է սկսում: Յերբ Ռուսաստանում բավական զարգացավ արդյունաբերությունը և առաջ յեկավ մեծաքանակ բանվոր դասակարգ, բանվորներն արդեն ըս-կըսեցին աստիճանաբար գիտակցության գալ և տեղ տեղ կազմվել սկսեցին հեղափոխական խմբավորումներ ու խմբակներ: Հենց այդ խմբակներն ել փաստորեն հանդիսանում են մեր կուսակցության առաջին բջիջները:

1-ին համագումարում, 1898 թվին կուսակցության հիմքը դրվեց միայն, իսկ 1900 թվից սկսեց արտասահմանում հրատարակվել «ԻՍԿՐԱ» («ԿՎՅՄ») թերթը: Այդ թերթը, վորի գլխավոր ղեկավարն էր ընկ. Լենի-նը, շատ մեծ գործ կատարեց մեր կուսակցության կազմակերպման և գաղափարական ամրապնդման համար:

1903 թվին տեղի ունեցավ կուսակցության 2-րդ համագումարը: վորն ընդունեց կուսակցության ծրագիրն ու ընտրեց կենտրոնական կոմիտե: Յերկրորդ համագումարում տեղի ունեցավ կուսակցության պառակտումը— քայլերիկների և մենշևիկների: Բաժանման պատճառը վոչ թե միայն կա-նանագրության առաջին կետի շուրջը ծագած տարաձայնությունն էր, ինչպես շատերը կարծում են: Բաժանման պատճառն այն էր, վոր քայլերիկներն ու մենշևիկները տարբեր կարծիքներ ունեցին: Բայլերիկները կարծում էին, վոր կուսակցությունը պիտի լինի ամբողջում մի կազմակերպություն, վորի ամեն մի անդամը պիտի ակտիվ աշխատանք կատարի կովկասում ցարիզմի դեմ. կու-սակցությունը պիտի զիջումներ չանի բուրժուազիային, այլ բուրժուազի-այի հետ ժամանակավոր համաձայնություն կնքելով հանդերձ, իր ձեռքը

վերջնի Ռուսաստանի ամբողջ հեղափոխական շարժման ղեկավարությունը և գյուղացիությունն ևս առաջնորդի դեպի ազատագրում:

Մենշևիկներն, ընդհակառակը, կարծում էին, վոր կուսակցու-թյան մեջ կարող է մտնել ամեն մեկը, վոր անդամավճար է տալիս. կուսակցու-թյունը չի կարող իր ձեռքը վերցնել հեղափոխական շարժման ղեկավարու-թյունը, քանի վոր Ռուսաստանում դեռ չի կատարվել բուրժուական հեղափոխու-թյուն և ղեկավարությունը պիտի գտնվի բուրժուազիայի ձեռքին և ուրեմն նրա հետ հաստատ համաձայնություն պիտի կնքել: Այս բոլորից բացի, մենշևիկները գտնում էին, վոր գյուղացիության ազատագրման մասին խոսելուց վոչինչ չի դուրս գա, վորովհետև գյուղացիությունը դեռ շատ խավար և հետամնաց է: Այս հիմնական սկզբունքային տարաձայնու-թյունները բաժանեցին քայլերիկներին ու մենշևիկներին:

Կուսակցության յերրորդ համագումարում արդեն, վորին մենշևիկները չէին մասնակցում (այդ 905 թվի ամառն էր), քննության առնվեցին 1905 թվի հեղափոխության խնդիրները: 1905 թվի հեղափոխության շրջա-նում բանվորներն ու գյուղացիներն հեղափոխական կովի յեր առաջ-նորդում միայն քայլերիկյան կուսակցությունը: Բայց ցարիզմը, շնորհիվ բուրժուազիայի նրա կողմն անցնելուն և մենշևիկների դավաճանության, շնորհիվ ոտար կապիտալի ոգնության, շնորհիվ բանվոր դասակարգի դեռ լավ կազմակերպված չլինելուն և քայլերիկների կուսակցության դեռ շատ ուժեղ չլինելուն, կարողացավ ջախջախել հեղափոխությունը:

Սկսվեց ունակցիայի շրջանը, յերբ մենշևիկները խաչ դրին հեղափո-խության վրա, իսկ քայլերիկներն անցան հեղափոխական ծանր ու դադտնի աշխատանքի:

1914 թվի համագումարին, պատերազմի ժամանակ, ամբողջ աշխարհում միայն մեր կուսակցությունն էր, վոր ասում էր, թե այդ պատերազմի-իմպերիալիստների, բուրժուազիայի պատերազմն է աշխատավորներին դեմ, բանվոր դասակարգը պիտի պատերազմ հայտարարի այդ պատերազմին և այն վերածի հեղափոխության:

Այդպես ել յեղավ մեզ մոտ, պատերազմը վերջացավ հեղափոխությամբ: 1917 թվի փետրվարին տապալվեց ցարիզմը, իսկ հոկտեմբերին բանվոր-ներն ու գյուղացիներն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը, հաստատե-լով պրոլետարիատի դիկտատուրան:

Բոլորին հայտնի յե մենշևիկների հակահեղափոխական դերը 1917 թվին և նրանից հետո. բոլորին հայտնի յե նաև, թե ինչպես քայլերիկները կուսակցությունը 1917 թվին բանվորներին ու գյուղացիներին առաջնոր-դելով դեպի հաղթանակ, հետագայում ղեկավարեց կռիվը համաշխարհային հակահեղափոխության դեմ. թե ինչպես նրա ղեկավարությամբ բանվորներն ու գյուղացիները 1921 թվից ձեռնարկեցին քայքայված տնտեսության վե-րականգնմանը:

Իսկ ներկայումս քայլերիկների կուսակցությունն առաջնորդում է մեր յերկրում սոցիալիստական հասարակության հիմքերը կառուցելու, ինդուս-տրիալիզացիայի և գյուղատնտեսության վերակառուցման մեծ գործը, հիմ-

և վաճ քանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութեան անխախտ դաշինքի վրա:

Այդ աշխատանքը վոգևորութիւնն ու յեռանդ ե ներշնչում ամբողջ աշխարհի շահագործվող մասսաներին, վորոնք իրենք ևս պատրաստվում են զեն շարտել շահագործողների ծանր լուծն իրենց վզից ու յերկրագնդի յեռեսին հաստատել աշխատանքի թագավորութիւնն:

ԱՅԻԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՉ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆՍԸ

Բանվորներն ավելի շատ բան գիտեն կոմունիստական Ինտերնացիոնալի մասին, քան թե գյուղացիները: Բանվորը քաղաքում ե ապրում, ավելի շատ ե կարդում, ավելի շատ ե զեկուցումներ լսում կոմունիստական Ինտերնացիոնալի մասին:

Պետք ե, վոր գյուղացին ել ծանոթ լինի և հասկանա, թե ի՞նչ ե կոմունիստական Ինտերնացիոնալը:

Կոմունիստական Ինտերնացիոնալ նշանակում ե՝ բոլոր յերկրների կոմունիստական կուսակցութիւնների միջազգային Միութիւնն, կենտրոն: Հաճախ նա կոչվում ե նաև 3-րդ ինտերնացիոնալ: Կարճ խոսքով դա կոչվում ե «կոմիւտերն»:

Բոլոր յերկրների գյուղացիութեան դրութիւնը կախված ե կոմիւնիստների հաջողութիւնից կամ անհաջողութիւնից:

1919 թվի մարտի 2-ին Մոսկվայում բացվեց կոմունիստական առաջին Միջազգային համագումարը:

Առաջին տարիները ընկ, Լենինն եր ղեկավարում կոմիւտերնը: Ընկ, Լենինն ասում եր, վոր կոմիւտերնը պետք ե ձգտի բուրժուազիային տապալել և ամբողջ աշխարհում հաստատել պրոլետարիատի (բանվոր դասակարգի) ղեկատարութան, այսինքն բանվոր դասակարգի անտեսական և քաղաքական ղեկավարութիւնը: Յերբ բանվոր դասակարգը իշխանութիւնն իր ձեռքը վերցնի, նա կտանի բոլոր աշխատավորներին զեպի սոցիալիզմ:

Կոմիւտերնի մյուս նպատակն ե բանվոր դասակարգի միացյալ ճակատ ստեղծել ընդդեմ կապիտալիզմի:

Ամեն մի յերկրում կոմկուսակցութիւնը գնալով ավելի շատ բանվորներ ե գրավում զեպի իրեն: Կոմիւտերնը ինչքան շուտ իր կողմը քաշի բանվորների ե գյուղացիների մեծ մասին, այնքան ել մենք շուտ կմոտենանք վերջնական հաղթանակին ամբողջ աշխարհում:

Բանվորն ու գյուղացին մեկ ընդհանուր թշնամի ունեն— դա՛ տարրեր բանգի կապիտալիստներն են, կալվածատերերը, գործարանատերերը և նրանց կուսակցութիւնները: Այդ կուսակցութիւնների շարքին ե պատկանում նաև հայ բուրժուազիայի կուսակցութիւնը, մեր աշխատավորի թըշնամին՝ դաշնակցութիւնը:

Ընդհանուր թշնամու դեմ պետք ե կովել միասին, ձեռք-ձեռքի տված: Ընկ, Լենինը սովորեցրեց, վոր բանվոր դասակարգը պետք ե իր հեռակց տանի գյուղացիութիւնը զեպի հեղափոխութիւնը և հաղթանակից հետո ել նրա հետ միասին պիտի կառուցի սոցիալիզմը: Կոմիւտերնը հենց այդ նպատակն ե իրագործում:

Պ Ր Ո Ֆ Ի Ն Տ Ե Ր Ն

Պրոֆինտերն—նշանակում ե՝ բանվորական-արհեստակցական միութիւնների միջազգային կազմակերպութիւն, միութիւն:

Կ Ի Մ

ԿԻՄ—նշանակում ե Յերիտասարդութեան կոմունիստական Ինտերնացիոնալ—միջազգային Միութիւնն, վորը միացնում ե բոլոր յերկրների հեղափոխական յերիտասարդութիւնը:

Գ Յ Ո Ւ Ղ Ի Ն Տ Ե Ր Ն

Գյուղիւտերն—նշանակում ե հեղափոխական գյուղացիութեան միջազգային կազմակերպութիւն-միութիւն:

Մ Ո Պ Ր

Գյուլութիւնն ունի հեղափոխութեան համար կովողներին և նրանց ընտանիքներին ոգնող միջազգային ընկերութիւն, վոր կարճ բառով Մոպր ե կոչվում: Մոպրը իր անդամներից հավաքած անդամավճարներով և հանգանակութիւններով ոգնութեան ե հասնում քաղաքական բանտարկյալներին, հալածվածներին, նրանց ընտանիքներին և հեղափոխութեան գաղափարը տարածելու պրոպագանդիստական աշխատանք ե կատարում:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԼ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԻՆՉ Ե ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Յերիտասարդութեան Համամիութենական Լենինյան կոմունիստական Միութիւնը, (վորին կարճ ձևով ասում են Լենկոմյութիտ միութիւն, կոմսոմոլ), ստեղծվեց 1918 թվին, սոցիալիստական և բանվոր-յերիտասարդութեան տեղական կազմակերպութիւններ ի Համառուսական համագումարում: Կոմյութիտմիութեան շուրջը համախմբվում ե յերիտասարդ բանվորները և գյուղացիները ամենալավ և գործունէյա մասը:

1918 թվին կոմյութիտականները թիվը 22 հազար եր, իսկ հիմա 2 միլիոնից անցել ե:

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԻ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Ընկ. Լենինն ասում ե.—

Կոմսոմոլը պետք է ամեն մի գործում ոգնության հասնի, իբր նախաձեռնությունը ցույց տա: Նա պետք է այնպիս լինի, վոր ամեն մի բանվոր կամ գյուղացի, վորը գուցե և մեկ անգամից չի հավատում կամ չի հասկանում նրա գաղափարները, բայց կենդանի գործով տեսնի ու համոզվի. կոմյերիտականներն իսկապես ճիշտ ճամբան ցույց տվողներ են:

Գյուղի յերիտասարդությունը և ամբողջ գյուղացությունը խորհրդային և հասարակական աշխատանքի մեջ զբաղելով կոմյերիտիությունը ոգնում է գյուղում սոցիալիզմ կառուցելուն:

Կոմյերիտիությունը Կարմիր նավատորմի շեֆն է. նա մեծ գործ է կատարել Կարմիր նավատորմը, մանավանդ նրա անձնակազմը, ամրապնդելու և զարգացնելու համար:

Համամիութենական վեցերորդ համագումարում (1924 թվին) կոմյերիտիությունը ընդունեց Լենինի անունը և այնուհետև կոչվում է «Լենինյան կոմյերիտիություն»:

ԿԱՆԱՆՑ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1918 թվի նոյեմբերի 16-ին Մոսկվայում հրավիրվեց բանվորուհիների և գեղջկուհիների առաջին համագումարը:

Այս համագումարում ընկ. Լենինը ցույց տվեց, թե ինչ ճանապարհով պիտի դնա կանանց կոմունիստական շարժումը և ասաց, վոր «ամեն մի խոհարարուհի պիտի յերկիր կառավարել սովորի»:

Այս համագումարի վորոշմամբ կուսակցական կոմիտեներին կից կազմակերպվեցին կանանց մեջ աշխատող հանձնաժողովներ, սակայն փորձը ցույց տվեց, վոր դա բավական չէ, հարկավոր է ավելի հիմնական աշխատանք կատարել աշխատավոր կանանց շարքերում, վորպեսզի նրանք ել լայն չափով մասնակցեն սոցիալիստական շինարարությանը:

Յեվ անա, 1919 թվից այդ հանձնաժողովների փոխարեն կազմակերպվում են կին-բաժիններ, վորոնք տարեց տարի աշխատելով մտնում են ամենախուլ գյուղերի աշխատավոր կանանց շարքերը, խոշոր աշխատանք տանում նրանց մեջ:

Կին-բաժինների աշխատանքների շնորհիվ մեր հասարակական ու պետական կյանքում սկսել է մեծ դեր խաղալ և աշխատավոր կինը: Այսօր Խորհրդային Միության մեջ գյուղի ու քաղաքի խորհուրդներում աշխատում են 153,600 բանվորուհի և գեղջկուհի: Արհեստակցական միություններում կանանց թիվը հասել է 2 միլիոն 569 հազարի, կոոպերատիվներին անդամ են 3 միլիոն բանվորուհի և գեղջկուհի, բացի այդ, մեր յերկրի աշ-

խատավոր կանայք հազարներով մասնակցում են մեր մամուլին, ՓՈՒԿ երին, կողլեկտիվ տնտեսություններին, ՄՈՊՐ ի, ՊԱՋԸ-Ավիաքիմի և այլ բազմաթիվ կազմակերպություններին:

8 տարի յե, վոր Հայաստանում ել կազմակերպվել են կին-բաժիններ, վորոնք խոշոր աշխատանք են կատարել Հայաստանի բանվորուհիների ու գեղջկուհիների շրջանում: Այսօր Հայաստանի խորհուրդների մեջ 1598 կին կա, արհմիությունների մեջ 6119, կուսակցության մեջ 467, տնայնագործ. կոոպերացիայում՝ 1500 հոգի, իսկ պատգամավորուհիների թիվը հասնում 8 հազարի:

Այսպիսով խորհրդային կարգերում կինն ել դարձել է լիակատար իր բավահավասար քաղաքացի և սկսել է ակտիվ կերպով մասնակցել մեր պետական ու հասարակական բոլոր աշխատանքներին:

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՐՃ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պիոներական շարժումն սկսվեց առաջին անգամ Զվիցերիայում, 1919 թվին: Խորհ. Միության մեջ այդ շարժումը սկսեց զարգանալ 1922 թվին «Պատանի Սպարտակյաններ» անվան տակ:

1922 թվի աշնան պիոներների թիվը 10 հազար եր, իսկ 1925 թվի մայիսին արդեն մեկ միլիոնից ավելի պիոներներ կային:

Խորհրդային Միության մեջ գտնվող պիոներական կոմունիստական կազմակերպությունները կոչվում են «ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ԱՊԱՏԱՆԻ ԱՊԻՈՆԵՐՆԵՐ»:

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՈՐԵՆՔՆԵՐԸ

Պիոներական կազմակերպության նպատակն է՝ պատանի սերունդից պատրաստել հուսալի փոխարինողներ կոմունիստական կուսակցության համար: Դրա համար ամեն մի պիոներ պետք է հաստատուն կերպով կատարի հետևյալ որենքները.—

1. Պիոները —բանվոր դասակարգի գործին հավատարիմ է:
2. Պիոները —կոմսոմոլի և կոմունիստի կրտսեր (փոքր) յեղբայրն ու ոգնողն է:
3. Պիոները —ամբողջ աշխարհի պիոներների և մանուկների ընկերն է:
4. Պիոները —աշխատասեր է և հաստատակամ:
5. Պիոները —համարձակ, ակտիվ ու ճշմարտախոս է: Նրա խոսքը հաստատուն է, ինչպես ժայռը:
6. Պիոները —առողջ է և դիմացկուն: Նա վոչ մի դեպքում չի հուսահատվում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մեր պետությունը խորհրդային է կոչվում հենց նրա համար, վոր ամբողջ իշխանությունը, սկսած գյուղականից մինչև կենտրոնը, պատկանում է խորհուրդներին:

18 տարեկան դառած ամեն ամեն մի աշխատավոր իրավունք ունի ընտրելու և ընտրվելու խորհրդի մեջ:

Գյուղական հասարակությունը ընդհանուր ժողովը ընտրում է գյուղ-խորհուրդ և պատգամավորներ և ջոկում՝ խորհուրդների գավառակային համագումարի՝ համար:

Գավառակային համագումարն ընտրում է գավառակային գործադիր կոմիտե և պատգամավորներ և ուղարկում խորհուրդների գավառային համագումարին:

Գավառային համագումարն էլ ընտրում է գավառային գործադիր կոմիտե (գավգործկոմ) և պատգամավորներ և ջոկում խորհուրդների հանրապետական համագումարի համար:

Հանրապետական համագումարն էլ ընտրում է հանրապետության բարձրագույն իշխանություն՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտե, վորն իր միջից ընտրում է Կենտգործկոմի նախագահությունը:

Քաղաքներում ապրող աշխատավորներն ընտրում են քաղաքային խորհուրդ: վորը իր միջից ջոկում է քաղաքային գործադիր կոմիտե՝ քաղաքում իշխանությունը վարելու համար:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մեկ հանրապետության բարձրագույն իշխանությունը խորհուրդների համագումարն է: Այս համագումարն ընտրում է կենտրոնական գործադիր կոմիտե (Կենտգործկոմ), վորը խորհուրդների մեկ համագումարից մինչև մյուս համագումարը դառնում է բարձրագույն իշխանությունը, վոր որենքներ և դեկրետներ է հրատարակում:

Կենտգործկոմի նստաշրջանները տարեկան 3 անգամ են լինում:

Կենտգործկոմը իր միջից ընտրում է նախագահություն և նշանակում է ժողովրդական կոմիսարների խորհուրդ (Ժողկոմխորհ):

Ժողկոմխորհը կատարողական բարձրագույն մարմինն է հանրապետության մեջ:

Ամեն մի ժողովրդական կոմիսար կառավարում է առանձին կոմիսարիատ (լուսավորության, հողագործության, առողջապահության, սոցապ, ներքին գործերի և արդարադատության): Մրանք կոչվում են տեղական կոմիսարիատներ: Կան նաև միացյալ կոմիսարիատներ (Ֆինանսների, բան-գյուղտեսչության, ժողտնտիսորհի, առևտրի և աշխատանքի), վորոնցից թե առանձին հանրապետություններն ունեն և թե Սորհրդային Միությունը: Բացի այդ կան այնպիսի ժողովրդական կոմիսարիատներ, վորոնք ընդհանուր միությունական են, իսկ առանձին հանրապետությունների մեջ զբաղվում

լիազորները կան, վոր մտնում են Ժողկոմխորհի մեջ: Դրանք են՝ արտաքին գործերի, սազմա ծովային, ճանապարհների, փոստ-հեռագրի և պետքազ-վարչության ժողովրդական կոմիսարիատները:

Դատական ամենաբարձր մարմինը Գերագույն դատարանն է, վորին նշանակում է Կենտգործկոմը:

Սորհրդային Միության բարձրագույն իշխանությունը խորհուրդների Համամիութենական Համագումարն է, վորը ընտրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտե: Միութենական Կենտգործկոմը կազմված է Միութենական Սորհրդից և Ազգությունների խորհրդից:

Միութենական Կենտգործկոմը իր միջից ընտրում է նախագահություն և ժողովրդական կոմիսարների խորհուրդ:

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն 18 տարին լրացրած աշխատավորները միայն, առանց ազգի ու սեռի խտրության: Նրանց ընտանիքի տնային տնտեսությամբ պարապող չափահաս անդամները նույն պես ընտրական իրավունք ունեն:

Ընտրել և ընտրվել չեն կարող (ձայնագուրկ են) ուրիշի աշխատանքը շահագործողները, իրենց դրամագլխի տոկոսներով, սեփական ձեռնարկության և կարողության (հողի, տան) յեկամուտով ապրողները, մասնավոր առևտրականները, ամեն տեսակի հոգևորականները և կրոնական ծառայողները, նախկին ցարական վոստիկանություն, ժանդարմերիայի, գաղտնի վոստիկանություն մեջ ծառայածները, նախկին թաղավորական գերզաստանի անդամները և ցարական ու դաշնակիների իշխանության ակտիվ գործիչները, խելագարները և դատարանի վճռով ընտրական իրավունքից զրկվածները:

Ձայնագուրկ ճանաչվել չեն կարող այն գյուղացիները, արհեստավորներն ու տնայնագործները, վորոնք իրենց հետ միասին աշխատեցնում են մեկ վարձու բանվոր կամ 2 աշկերտ:

Ձայնագուրկ չեն նույնպես աշխատանքի և պատերազմի հաշմանդամները, վորոնք առանց պատենտի առուտուրով զբաղվելու իրավունք ունեն և այն բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, վորոնք ցարական բանակում ծառայել են զորակոչի ուժով:

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Սորհուրդների ընտրությունները ղեկավարում են Կենտրոնական և տեղական Ընտրական Հանձնաժողովները:

Ընտրական Հանձնաժողովների պարտականությունն է՝ ընտրողների և ձայնագուրկների ցուցակները կազմել:

Ձայնագուրկ նախկին կալվածատերերը, բուրժուաները և կրոնավորները կարող են նորից ընտրական իրավունք ստանալ այն դեպքում, յեթե նրանք ամենաքիչը 5 տարի իրար վրա արտագրական և հասարակական ոգտակար աշխատանքով են ապրել և ապացուցել են, վոր կողմնակից են Սորհրդային իշխանության:

Չայնազուրկին ընտրական իրավունք տալու վորոշումը հանում է ընտրական Հանձնաժողովը և այդ վորոշումը հաստատում է Գործադիր Կոմիտեն: Գավառական Գործադիր Կոմիտեյի վորոշումը, ձայնազուրկներէ բողոքների վերաբերմամբ, վերջնական է:

ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Խորհուրդներին անդամներին ընտրում է ընտրողների ընդհանուր ժողովը: Այդ ժողովները հրավիրում են ընտրական հանձնաժողովները, ժողովի տեղի և ժամանակի մասին հայտնելով բոլոր ընտրողներին առնվազն 5 որ առաջ:

Ընտրութիւնը կարող է կատարվել թեկնածուների ամբողջ ցուցակներով և ամեն մի թեկնածուի համար առանձին-առանձին: Այդ կարգը վորոշում է ընտրողների ընդհանուր ժողովը: Ընտրութիւնը կատարվում է բաց ձևով, ձեռները բարձրացնելով: Խորհրդի մեջ ընտրված են համարվում ընտրական ժողովում ամենաշատ ձայն ստացողները:

Ընտրական ժողովի արձանագրութիւնն է կազմվում:

Յեթն ընտրութիւնը կատարելիս՝ ընտրական որենչի կամ հրահանգների վորեւ կետը խախտվել է, ճշտությամբ չի գործադրվել, այդ դեպքում ընտրութիւնը բեկանվում է և նոր ընտրութիւնն է նշանակվում:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՅԵՏ ԿԱՆՁԵԼԸ

Խորհրդի մեջ ընտրված պատգամավորները պետք է ամեն անգամ հաշիվ տան իրենց ընտրողներին, իրենց կատարած աշխատանքների մասին: Յեթն ընտրողները տեսնեն ու համոզվեն, վոր իրենց ընտրած այս կամ այն պատգամավորը վոչ մի աշխատանք չի կատարել, անգործունյա յեյեղել, նրանք կարող են ցանկացած ժամանակը յետ կանչել խորհրդից այդ պատգամավորին և նոր ընտրութիւնն կատարել:

ԻՆՉ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՄՏՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը (ԽՍՀՄ) բռնում է 21 միլիոն 210 հազար քառակուսի կիլոմետր (մոտ 19 միլիոն 800 հազար քառակուսի վերստ) տարածութիւն, վորը կազմում է յերկրագնդի վրա յեղած ցամաքի վեց մասից մեկը:

Խորհրդային Միութիւնի բնակչութիւնը թիվը հասնում է 145 միլիոնի, 100-ից ավելի ազգութիւններով:

Խորհրդային Միութիւնը կազմված է 6 ինքնուրույն խորհրդային հանրապետութիւններից.—

1. Ռուսաստանի խորհրդային ֆեդերատիվ սոցիալիստական հանրապետութիւն (ՌԽՖՍՀ):

2. Ուկրայնայի խորհրդային սոցիալիստական հանրապետութիւն (ՈՒԽՍՀ):

3. Բելոռուսիայի խորհրդային սոցիալիստական հանրապետութիւն (ԲԽՍՀ):

4. Անդրկովկասյան սոցիալիստական խորհրդային ֆեդերատիվ հանրապետութիւն (ԱՍԽՖՀ):

5. Ուզբեկստանի խորհրդային սոցիալիստական հանրապետութիւն (ՈՒԶԽՍՀ):

6. Թուրքմենստանի խորհրդային սոցիալիստական հանրապետութիւն (ԹԽՍՀ):

Խորհրդային Ռուսաստանն ունի 19 միլիոն 500 հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն և 100 միլիոն բնակիչ: Կենտրոնն է Մոսկվան:

Խորհրդային Ուկրայնան ունի 480 հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն և 29 միլիոն բնակիչ: Կենտրոնն է Խարկովը:

Խորհրդային Բելոռուսիան ունի 110 հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն և մոտ 4 ու կես միլիոն բնակիչ: Կենտրոնն է Մինսկը:

Խորհրդային Անդրկովկասն ունի 164 հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն և 5 ու կես միլիոն բնակիչ: Կենտրոնն է Թիֆլիսը:

Խորհրդային Ուզբեկստանն ունի 322 հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն և 5 միլիոն բնակիչ: Կենտրոնն է Սամարղանդը:

Խորհրդային Թուրքմենստանն ունի 473 հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն և մոտ մեկ միլիոն բնակիչ: Կենտրոնն է Պոլտարացկը (Ասխաբադը):

Խորհրդային Միութիւնի մայրաքաղաքը (կենտրոնը) Մոսկվան է:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՅԻԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխութիւնից յերկու-յերկու և կես տարի անց, Անդրկովկասյան ժողովուրդներն ու գյուղացիները ապստամբվելով իրենց ազգայնական կառավարութիւնների դեմ, տապալեցին նրանց, և յերաջարկական կարմեր Բանակի աջակցութեամբ հաստատեցին բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանութիւնն ամբողջ Անդրկովկասում: Խորհրդային իշխանութիւնն հաստատմամբ Անդրկովկասի բոլոր ժողովրդների համար սկսվեց ազգային համերաշխութեան և տնտեսական ու կուլտուրական շինարարութիւնի փառավոր շրջանը:

Անդրկով. յերեք խորհրդային հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքական շահերը կատարելապես համերաշխ են միմյանց:

Ամեն մի բանվորի և գյուղացու համար արևի լույսի պես պարզ է, թե ինչպես մեր յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը հազար և մեկ թելերով կապված են միմյանց հետ և նրանց միմյանցից անջատել, առանձացնել անկարելի է:

Ցարի և ազգայնական կառավարությունների որով ազգային թշնամությունը և ատելությունը հովկասի ժողովրդների մեջ այն սատիճան սրվել էր, վոր նրանց վերացումը հնարավոր էր միմիայն խորհրդային իշխանության յերկարատև ու համառ աշխատանքի շնորհիվ և հատկապես անդրկովկասյան կենտրոնացած կազմակերպություն ստեղծելու միջոցով:

Ահա այս հիմնական պայմաններն էին, վոր ստիպեցին Անդրկովկասի աշխատավորության լիազոր-ներկայացուցիչներին, անդրկովկասյան բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդներին առաջին համագումարին կազմել Անդրկովկասյան Հանրապետությունների Ֆեդերացիան:

1922 թվի դեկտեմբերի 13-ին անդրկովկասյան յերեք հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, պահպանելով իրենց ինքնուրույնությունը իրենց բոլոր ներքին գործերում (լեզուն, կուլտուրան, ժողովրդական լուսավորության գործը, դատարանը, միլիցիան, հողաշինարարությունը և այլն), ժողովրդական տնտեսությունը պլանավորելու և արտաքին քաղաքականությունը միասին վարելու նպատակով կազմում են մեկ Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն և այս վերջինի միջոցով միանում են Խորհրդային վողջ Միություն հետ:

Անդրկովկասյան Ֆեդերացիայի շնորհիվ այսոր մենք ունենք ընդհանուր յերկաթուղի, միասնական փոստի և հեռագրի ցանց, արտաքին առևտուր, ընդհանուր բանակ, ընդհանուր բյուջե և ֆինանսներ ու արդյունաբերության ու գյուղատնտեսության տրանսվորում, մի բան, վոր առանձին հանրապետություններն անջատ կերպով չէին կարող զարգացնել:

Անդրկովկասյան Խորհրդային Ֆեդերացիայի մեջ մտնելով՝ Անդրկովկասի ժողովրդներն այսոր մոռացել են փոխադարձ ազգային թշնամությունն ու տարածայնությունները և իրականացրել են Լենինի ավանդը թե՛ «Կովկասյան Խորհրդային Հանրապետությունների սերտ միությունը կստեղծի ազգային խաղաղության մի որինակ, վորի նմանը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և վորի նմանը չի կարող լինել բուրժուական հասարակարգում»:

ԵԼԵՔՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դաշնակցական Հայաստանում բառիս իսկական իմաստով, ելեքտրիֆիկացիա գոյություն չունի, յեթե չհաշվենք Լենինականում և Յերևանում յեղած քար ու քանդ վիճակում մեզ հասած մի յերկու խղճուկ մեքենաներ:

«Խորհրդային իշխանություն՝ գումարած ելեքտրիֆիկացիա՝ հավասար է սոցիալիզմ» — Լինինի այս լողունգն իրականացնելու աշխատանքներում, Խորհրդային Հայաստանը ջանք չխնայեց և այժմ կարող ենք արձանագրել մի շարք նվաճումներ:

1928—29 տնտեսական տարում Հայաստանում յեղած ելեքտրոկայանների թիվը հավասար է 23-ի՝ 42 շարժիչով և 10676 ձիու ուժով:

Գործող ելեքտրոկայաններից ամենամեծը, Լենինականի հիդրոկայանն է, վորն առայժմ ունի 3000 ձիու ուժ: Այդ հիդրոկայանը լրիվ աշխատեցվելու դեպքում կտա 7500 ձիու ուժ: Յերևանի հիդրոկայանում աշխատում են 2 շարժիչ մեքենաներ 2800 ձիու ուժի, այս կայանը ևս պետք է ընդարձակվի:

Քուլագերան կայանի մոտ կառուցվում է Ձորագետը՝ մի հսկայական ելեքտրոկայան, վորն ունենալու է 18.000 ձիու ուժի կարողություն և լինելու է ԽՍՀՄ լավագույն ելեքտրոկայաններից մեկը: Ձորագետը հնարավորություն կտա հիմնել ելեքտրական յերկաթուղի, շարժիչ ուժ մատակարարելու մի շարք հիմնված և հիմնվելիք գործարանների և լուսավորելու է Լոռվա ամենահեռավոր գյուղերը:

ՄԵՐ ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Լենինականը գտնվելով յերկաթգծի վրա և բամբակի պաշարով ապահովված լինելով, ուներ բոլոր հնարավորությունները տեքստիլ արդյունաբերության կենտրոն լինելու: Հայաստանն իր ուժերով անկարող կլինեք տեքստիլ արդյունաբերություն հիմնել, յեթե ոգնություն չհասնի Իվանովազանեսոկու բանվորությունը, վորը նվիրեց մի գործարան իր սարք ու կարգով: 1924 թ. հիմք դրվեց տեքստիլի շենքը՝ նախատեսված 40.000 իլիկների համար: Գործարանը հետագայում ընդարձակվեց և Լենինականի հիդրոշենի աշխատելուց հետո իլիկների թիվը հասցրեց 80.000-ի, վորը սակայն հնարավորություն ունի ընդարձակվելու մինչև 100.000-ի: Առաջիկա 5 տարում տեքստիլի արտադրանքը 605 տոննից հասցվելու է 7.158: Գործարանն ունի իրեն կից ջուլհականոց, վորի ղաղաչահների թիվը 166-ից հասնելու է 2520, տրիկոտաժային բաժին, վորի արտադրանքի պահանջը մեծ է և այլ բաժիններ: Այժմ գործարանում աշխատում են 1219 բանվոր: 28—29 անտեսական տարում այդ թիվը կհասնի 2260-ի, իսկ 32 թվին 6216-ի: Բանվորների վորակավորման համար 1929—30 թ. բացվելու է Գարգավուչ, վորին առաջին տարում արամադրվելու է 25.000 ու., իսկ հետագայում տարեկան 40.000 ուրլի:


1928—29 թ. կառուցումների համար ծախսվելու է 804.000 ուրլի, վորից 200.000 ուրլին հատկացվելու է ակումբ և մանկական մսուր և հրապարակ կառուցելու գործին:

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հիմա Խորհրդային Հայաստանում 14 բամբակագործական կոոպերատիվ կա: Գոոպերացիան, ինչպես առևտրականներին, այնպես էլ կուլակին ու չարչուն զրկեց բամբակի տված հասույթից: Հիմա մեր յերկրի բամբակն, առանց բացառություն, կոոպերացիայի միջոցով է մթերվում: Մթերումից բացի, կոոպերացիան կազմակերպել է նաև բամբակի արտադրության գործը: Բամբակացաններն ստանում են սերմ, տրակտոր, բուժիչ նյութեր, պարարտանյութեր, ցորեն, մանուֆակտուրա և այլն:

Այդ մեծ նվաճումներից բացի, բամբակագործական կոոպերացիան իր առաջ նպատակ է դրել լայնացնել մեր յերկրի բամբակի ցանքսերի տարածությունն ու բարձրացնել բամբակի ցանքսերի բերքատվությունը: Հիմա այդ հաշվով էլ կոոպերացիան իր աշխատանքները դասավորում է: Որինակ, 5 տարվա ընթացքում բամբակի ցանքսերը լայնացնելով, 32 թվին հասնելու յե 23,500 հեկտարի (ամբողջ Հայաստանում հիմա միայն 14 հազար 422 հեկտար է): Այդ թվին մեր յերկրի բոլոր ցանքսերը տեսակավոր սերմով է կատարվելու: Մինչև 32 թիվը մեր յերկրի բերքատվությունը պարարտացման միջոցով բարձրանալու յե 17 տոկոսով: Այդ թվին մեր յերկրում 14 հազար 150 հեկտար բամբակ շարքացանով պիտի ցանված լինի, այսինքն, մոտ 60 տոկոսը և շարքացանի միջոցով բերքատվությունը 17 տոկոսով բարձրանալու յե: 5-ամյակի վերջին մեր յերկրի բամբակի ցանքսերի 40 տոկոսն աշան հերկ է լինելու, վորից էլ ամեն մի հեկտարի բերքատվությունը 12 կիլոյով ավելանալու յե: Արորը գութանով փոխարինելու հետևանքով բամբակի բերքատվությունը մեկ հեկտարից 15 կիլոյով է ավելանալու, իսկ այդ թվին մեր յերկրի արորների 70 տոկոսը գութանով պիտի փոխարինվեն: Գոմադրի պարարտացումից ավելանալու յե բերքատվությունը մոտ 2 տոկոսով:

Ինչպես տեսնում ենք, միայն կոոպերացիան է, վոր հնարավորություն է տալիս մեր գյուղացուն բարձրացնելու բամբակի բերքատվությունը:



Լենինականի տեքստիլ գործարանն ու տեքստիլ գլխավորները

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ

«Յեթե մենք մոտենում ենք գյուղացիությունը ընդհանուր բացատրություններով հողագործական կոմունաներ կազմակերպելու ոգտակարություն մասին և չենք կարողանում դրա հետ միասին գործով ցույց տալ այն ոգուտը, վոր տալիս են ընկերային արտելական տնտեսությունները, գյուղացիությունը հավատ չի ընծայի մեր պրոպագանդին»:

Ի Ն Չ Ի Ց Ս Կ Ս Ե Լ

Ամեն մի գյուղացի ցանկանում է բարելավել իր տնտեսությունը և գուրս գալ տնտեսական հետաճաց գրությունից, իսկ դրա համար առաջին հերթին հարկավոր է լավ բերք. բայց մենք գիտենք, վոր լավ բերք ստանալու համար անհրաժեշտ է ինչպես հարկն է հողը մշակել, պարարտացնել և ամբողջ տնտեսությունը վարել մեքենաներով: Մի չութով և փայտե տափանով առաջ գնալ չի լինի և այդպիսի գյուղատնտեսական ինվենտարով լավ բերք յերբեք չի ստացվի. ուրեմն, հարկավոր է ձեռք բերել գութան, շարքացան, սերմագտիչ մեքենա, տրակտոր և այլն: Բայց կարող է արդյոք անհատ չբավոր ու միջակ տնտեսությունը ձեռք բերել այդպիսի մեքենաներ: Ի հարկե, վոչ. և անգամ, յեթե վարկի միջոցով էլ ձեռք բերի, այնուամենայնիվ տրակտորի կամ շարքացանի ծախսերի տակից զժվարություն մը կկարողանա գուրս գալ:

Վերցնենք՝ որինակ՝ շարքացանը, վորը տարեկան ցոնում է մոտ 70 գեսյատին, իսկ մեր գյուղացին ունի միջին հաշվով մեկ ու կես գեսյատին վարելահող:

Պարզ բան է, վոր այդ մեքենան անհատական տնտեսության մեջ պահել բոլորովին միտք չունի, և ոգուտ էլ չկա դրանից: Այստեղից է յեղրակացություն՝ վոր գյուղացին իր տնտեսությունը բարձրացնելու համար, պիտք է միանա մի քանիսի հետ և կուլեկտիվ ուժերով ձեռք բերի գյուղագործիչներ ու մեքենաներ:

Բացի դրանից, յուրաքանչյուր գյուղացի իր տնտեսությունը վարում է անհատորեն, իսկ նրա հողը բաժանված է մի քանի մասերի. լավ մեքե-

նան—տրակտորը և շարքացանը, այդ մի քանի թիզանոց հողերի վրա, ի հարկե, չի կարելի բաց թողնել. դրա համար անհրաժեշտ է հողերը միացնել—կոլլեկտիվացնել, վորովհետև միայն մեծ հողամասի վրա կարող է տեխնիկան գործել, մեծ ոգուտներ տալ գյուղացուն և թեթևացնել նրա շարքաչ աշխատանքը: Ուրեմն, միակ յեկը՝ կոլլեկտիվն է:

Կան յերեք տիպի կոլլեկտիվ տնտեսություններ՝ հողը համայնորեն մշակող ընկերություն, գյուղատնտեսական արտել և կոմունա: Յեթե կոլտնտեսության անդամները միացնում են միայնիբնց հողը, իսկ տնտեսության մնացած ճյուղերը վարում են անհատորեն, այդ դեպքում ավելի լավ է կազմակերպել հողը համայնորեն մշակող ընկերություն. դա ներկայումս կոլլեկտիվներից ամենաձեռնտու և պարզ ձևն է, վորը գյուղացու տնտեսությունը ամբողջովին վերափոխման չի յենթարկում: Իսկ հետագայում, յերբ այդ կոլլեկտիվների անդամներն ավելի կընտելանան կոլլեկտիվ աշխատանքին և ավելի կմտերմանան սիմյանց հետ, այդ դեպքում ընկերությունը շատ հեշտությամբ կարելի յե վերածել գյուղատնտեսական արտելի:

Այդ կոլլեկտիվի ձևը համեմատաբար ավելի բարդ է, քան հողը համայնորեն մշակող ընկերության, բայց ավելի ոգտավետ է:

Իսկ, յեթե կոլլեկտիվը կազմակերպվում է բատրակներից և լծկանագործի չքավոր գյուղացիներից, այդ դեպքում ավելի նպատակահարմար է կազմակերպել գյուղատնտեսական արտել, վորովհետև նրանք համարյա թե վոչինչ չունեն, իսկ արտել կազմակերպելով ձեռք կբերեն լծկաններ, գյուղագործիքներ ու մեքենաներ, կկառուցեն ընդհանուր գոմ և այլն: Մի խոսքով, կղնեն նոր տնտեսության հիմք: Ահա այս բոլորը հաշվի առնելով է, վո



Կոլտնտեսությունը կարճովիք ֆուդանում է



Կոլտնտեսությունը արտի բերքը հավաքում է

պետք է ընտրել կոլլեկտիվի տիպը: Առ 15 դեկտեմբերի 28 թ. Հայաստանում կոլլեկտիվների թիվը հասնում է 96-ի, վորից հողը համայնորեն մշակող ընկերություն՝ 13, գյուղատնտեսական արտել՝ 78, կոմունա՝ 5: Ի հարկե, դրանցում կան թույլերը և շատ ուժեղները: Կոմ. կուսակցությունը, Խորհրդային իշխանությունը և գյուղկոոպերատիվ բարձրագույն որգանները ամեն միջոց ձեռք են առնում ուժեղացնելու յեղած կոլլեկտիվները: 1929 թ. դրանց թիվը նախատեսվում է հասցնել 200-ի:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մինչև կոլլեկտիվի կազմակերպումը, պետք է տանել գյուղացիության մեջ լայն բացատրական աշխատանք և այնպես պետք է անել, վոր կոլլեկտիվում անդամագրվող յուրաքանչյուր գյուղացի հասկանա, թե ինչու համար է մտնում և ինչ ոգուտ ունի դրանից:

Նախապատրաստական աշխատանքը կարող են սկսել ակտիվ գյուղացիներից մի փոքր խմբակ—կուսակցական, խորհրդային և կոոպերատիվ մարմինների աջակցությամբ:

Յեթե մտադրվում է կազմակերպել հողը համայնորեն մշակող ընկերություն, նախաձեռնող խմբակը պետք է դիմի Հողբաժին կամ կոոպերատիվ մարմիններին և տեղեկանա, թե յերբ պետք է կոլլեկտիվը ստանա միացյալ հող, աշխատանքները սկսելու համար պահանջվող միջոցներ և ինչպիսի արտոնություններով է ոգտվում կոլլեկտիվը և այլն: Իսկ կոլլեկտիվում անդամագրվածներն իրենց պարտականությունների ու անելիքների հետ ավելի լավ ծանոթանալու համար, պետք է ձեռք բերեն իրենց ընա

բաժնի կողմից կանոնադրութիւնը և մանրամասնորին ծանոթանան նա ընդ կետերի հետ: Համաձայն կանոնադրութեան, կողմից անգամ կարող են լինել 16 տարեկան և նրանից բարձր տարեք ունեցող բոլոր այն քաղաքացիները, վորոնք կապված են գյուղատնտեսութեան հետ, չեն զբաղվում առևտրով և վորոնք ոգովում են ընտրական իրավունքով:

Բոլոր տիպի կողմից կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ հիմնադիր անդամներ: Յուրաքանչյուր տիպի կողմից տպագրված կանոնադրութեան մեջ կան բաց թողած տեղեր, այդ տեղերը հիմնադիրները պետք է լրացնեն, համաձայն հիմնադիր ժողովի վորոշման:

Կողմիցներում մուտքի վճարը սահմանվում է 50 կոպեկից մինչև 1 ա., իսկ փայլվածքը՝ 50—500 ա.: Այդ գումարը անդամներից գանձվում է ինչպես գույքով, այնպես և նատուրայով. այնպես վոր այդ գումարից չպետք է վախենալ:

Կանոնադրութեան մեջ կա բաց թողած տեղ, վորտեղ կողմից անդամները պետք է ցույց տան, թե վորքան լրացուցիչ պատասխանատվութիւն են վերցնում իրենց վրա. որինակ, յիթե նրանք գրել են՝ «տասնապատիկ», դա նշանակում է, վոր յիթե փայլվածքը 10 ուրլի յե, ապա նրանք բացի դրանից իրենց վրա յեն վերցնում նորից 100 ուրլու պատասխանատվութիւն, իսկ դրա ոգուտը դայանում է նրանում, վոր ավելանում է կողմիցի սեփական դրամագույնը և կողմիցի լայն հնարավորութիւն է ստանում պետութիւնից վարկեր ձեռք բերելու համար: Դրա հետ միասին իրենց վրա վերցնելով լրացուցիչ պատասխանատվութիւն, կողմիցի անդամներն ավելի զգաստ կերպով կհետևեն կողմիցի աշխատանքներին, նրա վրասներին ու վատնումներին:

Այդ նախապատրաստական աշխատանքներից հետո, նախաձեռնող խմբակը հրավիրում է գյուղի հասարակական ժողով, վորտեղ վորոշվում է կազմակերպելիք կողմիցի տիպը և կազմում են կողմիցի մտնել ցանկացողները:

Կողմիցի պետք է կազմակերպել գլխավորապես չքավոր ու միջակ տնտեսութիւններից և բարակներից:

Միաժամանակ պետք է աշխատել կողմիցի մեջ անդամագրել աշխատասեր, գիտակից և նվիրված ընկերների, այլ կերպ—կողմիցի աշխատանք տանելը անհնարին է: Ծուլիքը, թայֆարագները և ինտրիգաներ սարքովները կքայքայեն կողմիցի, ուստի հարկավոր է այդ խնդրում լինել շատ զգույշ: Յուրաքանչյուր պատրաստելուց հետո, հրավիրվում է հիմնադիրների ժողով (հիմնադիրները պետք է լինեն 10 հոգուց վոչ պակաս), վորտեղ մանրամասնորին քննութեան են առնում կանոնադրութիւնը և լրացնում բաց թողած տեղերը:

Նախաձեռնող խմբակը հինգ հոգու պարզ ստորագրութեամբ լրացնում է 3 որինակ կանոնադրութիւններ, կազմում է դիմում և այդ բոլորը հիմնադիրների ցուցակի և ժողովի արձանագրութեան պատճենի հետ ներկայացնում է Գավհողքաժին՝ ընդհանուր կարգով ստորագրելու համար: Այստեղ պետք է նույնպես ստորագրութիւնները և փաստաթղթերը հաստատված լինեն շրջործկոմի կողմից:

ԱՌՍՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Կանոնադրութիւնը ստորագրելուց հետո, հրավիրվում է առաջի ընդկանուր կազմակերպչական ժողով. այդ ժողովին պետք է հրավիրել Գործհոմի, կուսկոմի, վարկային ընկերութեան ներկայացուցիչներին, շրջադատեսին և այլ շահագրգռված մարդկանց: Այդ ժողովը քննում ու լրացնում է ներքին կանոնները, վորտեղ պարզ կերպով շեշտվում է գյուղգործիքները ու մեքենաները ոգտագործելու, ստացած արդյունքը բաշխելու կարգը և այլն: Դրա հետ միասին ընդհանուր ժողովը քննութեան է առնում հետևյալ հարցերը.

- 1. Հիմնադիր անդամների հաշվետու զեկուցումը— իրենց տարած աշխատանքների մասին, 2. աշխատանքի ծրագրի և ներքին կարգ ու կանոնների քննումն ու հաստատումը, 3. ստանալիք վարկի քանակի վորոշումը, 4. խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրութիւնը և ընթացիկ հարցեր:

Ամեն մի կողմիցի անպայման պետք է անդամագրվի շրջանի գյուղավարկային ընկերութեանը. այդ իսկ պատճառով այդ հարցը նույնպես պետք է քննութեան առնել հիմնադիրների ժողովում:

Կողմիցի հիմնադրումից, խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրութիւնից հետո, կողմիցի անդամները շարունակ պետք է հետաքրքրվեն նրանց աշխատանքով, ոգնեն նրանց, հաճախեն ընդհանուր ժողովները, ակտիվ մասնակցեն այդ ժողովներին, յերևան հանեն կողմիցի ղեկավարութիւնն ու բացերը, կողմիցի ուժով վերացնեն այդ բացերը և այդ միջոցով առողջացնեն ու ամրապնդեն կողմիցի հիմքերը:

«Անհրաժեշտ է, վոր գյուղացին յուրաքանչյուր կոմունայում, յուրաքանչյուր արտելում տեսնի մի այնպիսի բան, վորին ոգնում է պետութիւնը և վորի մեջ գտնի հողագործութեան նոր ձևեր, վորոնք վոչ թե գրքերով, այլ գործնական կյանքում ցույց են տալիս իրենց առավել լինելը հնից»:

Լ Ե Ն Ի Ն

ԳՅՈՒՂ, ՀԱՌԱՋ ԴԵՊԻ ԽՈՇՈՐ ԿՈՒՆԵԿՏԻԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԸ

ԻՆՉԴԵՄ ՍՏԱՆԱԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԸ

Գյուղատնտեսական վարկը կարելի յի ստանալ միայն գյուղվարկային ընկերության միջոցով:

Ամեն անգամ ընկերության մեջ նոր անդամ ընդունելիս՝ ընդհանուր ժողովը սահմանում է, թե ինչ գումարի վարկ կարելի յի տալ հիշյալ անդամին, կամ այլ խոսքով, վարկ են բացում նրա համար:

Վարկերը տրվում են կարճատև, մինչև 12 ամիս ժամանակով 8—10 տոկոսով և յերկարատև՝ մինչև 5 տարի, 6 տոկոսով: Յերկարատև վարկ տրվում է գլխավորապես չբավորությանը:

Վարկը տրվում է փողով կամ ապրանքով (նայած, թե ինչ է խնդրել վարկավորողը):

Ընկերության վարչությունը պարտավոր է խիստ կերպով հետևել վոր ստացած վարկը իր նպատակին ծառայի, բարելավի վարկավորվողի տնտեսությունը և վոչ թե ծախսվի նրա անձնական պահանջների (հագուստ, հարսանիք և այլն) բավարարման համար:

ԻՆՉԴԵՍ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԳՅՈՒՂՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ընկերության վարչության մեջ պետք է ընտրել հուսալի և գործունյա անդամներին և խստիվ հետևել վերջ տալու վատնումներին և զեղծումներին ու ավելորդ ծախսերին, վորոնք ընկերությանը մեծ վնասներ են հասցնում և հաճախ քայքայում նրան:

Ընկերության սեփական դրամագլուխը գոյանում է անդամների փայվճարներից և ընկերության ստացած ոգտից. ուստի պետք է հետևել, վոր անդամները մուծեն իրենց փայվճարները վորոշված ժամկետին և միայն չբավորներին թույլ տալ մաս-մաս մուծելու:

Մի քանի գյուղվարկային ընկերություններ գործադրում են վարկա-



Պաթնարտերը կաթի յուղի տոկոսը վորոշելու ցենսորֆուդ է ստացել վարկով:



Գյուղացին ստացած վարկով գուրան է գնել

յին միջոցները սխալ ուղղությամբ, վարկավորելով կուլակներին: Նրանք մոռանում են, վոր պետք է վարկավորել բացառապես չբավորներին և միջակներին: Այդ սխալներն անպայման պետք է վերացնել, հակառակ դեպքում վերջ կտրվի նման ընկերություններին վարկ տալը և նրանց դեկավարները պատասխանատվության կենթարկվեն:

Գյուղվարկային ընկերության աշխատանքները կանոնավորելու և ուժեղացնելու համար անհրաժեշտ է ժամանակին վերադարձնել վերցրված վարկը, հակառակ դեպքում կխանգարվի ընկերության աշխատանքների ձրագիրը և գյուղատնտեսական վարկի ճիշտ բաշխումն ու զարգացումը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԽՆԴԻՐՆ Ե ՎԱՐԿԱՎՈՐԵԼ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԶԲԱՎՈՐՆԵՐԻՆ

Համ. ԿԿ (բ) 15-րդ համագումարը վորոշել է ուժեղացնել գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցը, ներգրավելով նրա մեջ բոլոր չբավորներին և միջակներին մեծամասնությամբ: Գյուղատնտեսական վարկային սխտեման պետք է վարկի միջոցով նպաստի և սժանդակի գյուղական տնտեսության կոոպերացմանը և նրա կոլլեկտիվացմանը:

Յուրաքանչյուր գյուղվարկային ընկերության պարտականությունն է իր ցանցի մեջ ընդգրկել բոլոր կոլլեկտիվ տնտեսություններին և կազմակերպել նրանց վարկավորելու գործը:

1) Ամեն մի ընկերություն պետք է կազմակերպի չբավորական տնտեսությունների կոոպերացման և վարկավորման ֆոնդեր, հատկացնելով դրանց իրենց ոգտից 15 տոկոս:

2) Ընդունել գյուղվարկային ընկերության մեջ շրջանի բոլոր չբավոր տնտեսություններին, տալով նրանց յերկարատև ժամկետ (3—5 տարի) փայվճարները մուծելու համար, լրացնելով փայվճարների արժեքը չբավորության կոոպերացման ֆոնդից:

3) Ճիշտ հիմքերի վրա դնել չբավորության վարկավորման ֆոնդից վարկ տալը, առաջին հերթին վարկավորելով կոլլեկտիվ տնտեսություններին և ապա ընկերության չբավոր անդամներին: Զբավորական ֆոնդերը ճիշտ բաշխելու նպատակով նշանակել խիստ հսկողություն, չբավորներ կողմից:

4) Նպաստել և ոգնել չբավորներին կոլլեկտիվ տնտեսություններում ու հողի միացյալ մշակման և մեքենաների ընկերությունների մեջ կազմակերպվելու, առաջին հերթին նրանց վարկավորելով:

